


«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
սոցիալական արհեստագործական
կախարարի
17.08.2003 թվականի
թիվ 19-ՆԿ հրամանով

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Գլխավոր
տարածքային բաժնում
գրանցման թիվ 2921001931
գրանցման վկայականի թիվ 0304 059002
Բաժնի պետ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Գյումրու «Երեխաների տունը», այսուհետ՝ մանկատուն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, բժշկասոցիալական բնույթի մանկական խնամակալական պետական ոչ առևտրային կազմակերպություն է:
Մանկատունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Գյումրիի «Երեխաների տուն» պետական հիմնարկի վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:
2. Մանկատան գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իրավական այլ ակտերով, սույն կանոնադրությամբ:
3. Մանկատունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
4. Մանկատան գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:
5. Մանկատունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
Մանկատունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատալսանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Մանկատունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
7. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած մանկատան պարտավորությունների, իսկ մանկատունը իր հիմնադրի պարտավորությունների համար:
8. Մանկատունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:
9. Մանկատունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:
10. Մանկատան գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թամանյան 17
11. Մանկատան անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Handwritten notes:
«ԱՍՏՆԱՍՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
«Մ» մարման
թիվ 69-...




«ԳՐԱՆՅՎԱԾ Է»

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Գյումրու
տարածքային բաժնում

գրանցման թիվ 29210. 01930

գրանցման վկայականի
Բաժնի պետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ
«ԵՐԵՎԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տունը», այսուհետ՝ մանկատուն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, բժշկասոցիալական բնույթի մանկական խնամակալական պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Մանկատունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրիի «Երեխաների տուն» պետական հիմնարկի վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

2. Մանկատան գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Բաղաբացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իրավական այլ ակտերով, սույն կանոնադրությամբ:

3. Մանկատունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Մանկատան գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Մանկատունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Մանկատունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Մանկատունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած մանկատան պարտավորությունների, իսկ մանկատունը իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Մանկատունն ունի Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

9. Մանկատունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Մանկատան գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թամանյան 17:

11. Մանկատան անվանումն է՝

Գյումրիի «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

հայերեն կրճատ՝ ԳԵՏՊՈԱԿ

ռուսերեն՝ “Дом ребенка города Гюмри” Государственная Не Коммерческая Организация

անգլերեն կրճատ՝ ДРГГГНКО

անգլերեն՝ “Children’s home of Giumry” State non Commercial Company.

անգլերեն կրճատ՝ CHGSNCC:

II. Մանկատան գործունեության նպատակը և առարկան

12. Մանկատան հիմնական նպատակը կենտրոնական նյարդային համակարգի, օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին ու ձեռքբերովի ֆիզիկական արատներ ունեցող հաշմանդամ երեխաների մշտական խնամքի ապահովումն է:

13. Մանկատան գործունեության առարկան մինչև 6 տարեկան հաշմանդամ երեխաների բժշկավերականգնողական, սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջների բավարարումը, դաստիարակության ապահովումը, այլ խնամակալական մանկական կազմակերպություններ նրանց տեղափոխումն է:

14. Մանկատունն իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

ա) կազմակերպում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընդունելությունը,

բ) աջակցում է նրանց հարմարվելու նոր սոցիալական միջավայրին,

գ) կազմակերպում է սաների կենցաղային սպասարկումը, ապահովում է նրանց համապատասխան խնքստեճակներով, անկողնային պարագաներով, հագուստով, կոշիկներով,

դ) ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով երեխայի տարիքից և առողջական վիճակից,

ե) կազմակերպում է դիսպանսերիզացում, բուժում, մասնագետ բժիշկների օգնություն, շորջօրյա բժշկական սպասարկում, անհրաժեշտության դեպքում հոսպիտալացում,

զ) նախապատրաստում է որդեգրման կամ խնամակալության հանձնվող երեխաների փաստաթղթերը,

է) իրականացնում է երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների ծանոթացումը որդեգրման ենթակա երեխաների հետ օրենսդրությամբ սահմանված կարգով,

ը) կազմակերպում է երեխաների ամառային հանգիստը,

թ) կազմակերպում է 6 տարին լրացած երեխաների տեղափոխումը այլ մանկական խնամակալական կազմակերպություններ,

ժ) առցիկացնում է սանհիգիենիկ, հակահամաճարակային միջոցառումներ,

ժա) կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված անձնակազմի որակավորման բարձրացմանը և աշխատանքների կատարելագործմանը,

ժբ) սրահայանում է սաների սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մանկատունը գտնվում է հատուկ կառուցված շենքում, որը համապատասխանում է հանրա-հիգիենիկ, հակահրդեհային և անվտանգության տեխնիկայի պահանջներին և երեխաների կյանքի և կենցաղի համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ:

Մանկատունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ ոլորտները՝ հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, երեխաների խնամքի ու դաստիարակության վճարովի ծախսերի մատուցում:

17. Մանկատունը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ ծասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

III. Մանկատան կառավարումը

18. Մանկատան ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմինը):

19. Լիազորված պետական մարմինը՝

- ա) ապահովում է մանկատան քնակաճանձ գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,
- բ) հաստատում է մանկատան եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
- գ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մանկատան տնօրենի ներկայացմամբ հաստատում է մանկատան կառուցվածքը և աշխատողների թիվը,
- դ) իրականացնում է մանկատան գործունեության նկատմամբ վերահսկողություն,
- ե) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մանկատան տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները,
- զ) լսում է մանկատան գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերատուգման արդյունքները, հաստատում մանկատան տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- է) վերահսկողություն է իրականացնում մանկատան ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ,
- ը) վերահսկողություն է իրականացնում մանկատան սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս մանկատան գույքի օգտագործման կամ վաճակալության հանձնման համար
- թ) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Մանկատան ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

21. Մանկատան տնօրենի պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Տնօրենը պետք է ունենա բարձրագույն բժշկական կրթություն:

Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի կնքման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ է հայտնաբերվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Տնօրենը է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կողմից սահմանված պետական մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Մանկատան տնօրենը օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես է գալիս որպես Մանկատան երեխաների խնամակալ:

23. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

24. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մանկատան և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

25. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս մանկատան անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մանկատան գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է մանկատան անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում մանկատան աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում մանկատան կառուցվածքը, աշխատողների թիվը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

ը) օրերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,

թա) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում մանկատան եկամտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

թբ) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամտների և ծախսերի նախահաշիվը,

թգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,

թդ) տնօրենը հաստատում է մանկավարժական խորհրդի կանոնադրությունը և կազմը:

26. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնային և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

27. Տնօրենի քացակայության ժամանակ նրա կրամանով, տնօրենի լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը:

28. Երեխաների խնամքի, բժշկա-սոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով ստեղծվում է բժշկա-մանկավարժական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

29. Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, բժշկական բաժանմունքի վարիչը, ավագ մանկավարժը, ռեաբիլիտոլոգը, տնտեսական հարցերով տնօրենի տեղակալը և այլ մասնագետներ, լիազորված պետական մարմնի ներկայացուցիչը:

30. Խորհուրդը կազմված է 11 անդամներից:

31. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամներից խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով:

32. Խորհրդի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

33. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- ա) Խորհուրդը որոշում է երեխաների մտավոր հետամնացության աստիճանը,
- բ) քննարկում և հաստատում է մանկատան աշխատանքային պլանը, բուժաբուժֆիլակտիկ ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերը,
- գ) քննարկում է դաստիարակչական խմբերի և բաժանմունքների աշխատանքների կազմակերպման հարցերը,
- դ) քննարկում է դաստիարակների, բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեությունը,
- ե) քննարկում է երեխաների խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարությունը,
- զ) 6 տարին լրացած սաների այլ մասնագիտացված հաստատություններ տեղափոխելու հարցը:

34. Խորհրդի գործունեության կարգը սահմանվում է Խորհրդի կանոնադրությամբ:

35. Մանկատան աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, մանկատան ընդհանուր և առանձին ստորաբաժանումների, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

IV. Մանկատան սեփականությունը

36. Մանկատան սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև մանկատան գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից: Մանկատան գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

37. Մանկատանն իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն՝ ու ֆինանսական միջոցները:

38. Մանկատան սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, քացառությամբ մանկատան լուծարումից հետո մնացած գույքի:

39. Մանկատան սեփականության պահպանման հոգսը կրում է մանկատանը:

40. Մանկատան սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

V. Մանկատան ամրացված գույքը

41. Հիմնադրամի որոշումով մանկատան անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

42. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից մանկատան ամրացված գույքը:

43. Մանկատունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման: Մանկատունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մանկատան ստացած եկամուտները մանկատան սեփականությունն է:

44. Հիմնադրի կողմից մանկատան ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ մանկատան օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VI. Մանկատան ձեռնարկատիրական գործունեությունը

45. Մանկատունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց ձեռնարկատիրական գործունեությանը կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով մանկատունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

46. Մանկատան գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

47. Մանկատունն իր կարիքների համար գնումները կատարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մանկատան համար ուղղակիորեն նախատեսված **փողոցների սահմաններում** մանկատան կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, **աշխատանքների** և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման **ձևով**: Մանկատան կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

48. Մանկատան հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

VII. Վերահսկողությունը մանկատան գործունեության նկատմամբ

49. Մանկատան գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

50. Մանկատան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

VIII. Մանկատան վերակազմակերպումը և լուծարումը

51. Մանկատունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Մանկատունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

52. Մանկատան լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պատկանությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

53. Մանկատունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

54. Մանկատունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

55. Մանկատան լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: